"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 1496-Լ

«11» սեպտեմբերի 2025 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾՔՆԵՐԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածով և 120-րդ հոդվածի 3-րդ մասով, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 18.1-ին հոդվածով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 2377-Ա/2 հրամանով և ՀՀ մշակույթի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներով Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով՝

հրամայում եմ.

1. **2025 թվականի հոկտեմբերի 14-ին** անցկացնել Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգում (մասնագիտական որակավորման քննություն), այսուհետ՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգում:
2. Հաստատել Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ձևաչափը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման անցկացման գնահատման թերթիկի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Հաստատել Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ենթակա երաժիշտների ցանկը՝ համաձայն N3 հավելվածի:
5. Սահմանել, որ Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգումն անց է կացվելու «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի՝ ք. Երևան, **Թումանյան փող. 54 հասցեի շենքի 1-ին հարկի հանդիսությունների (VIP) սրահում:**
6. Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգումը սկսվելու է **2025 թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին:**

Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգումն անց է կացվելու զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման մասնակիցների ազգանունների այբենական կարգով:

7. Հարգելի պատճառների առկայության դեպքում Թատրոնի տնօրենի հրամանով զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամկետը կարող է հետաձգվել:

8. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման նպատակով Թատրոնի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ հանձնաժողովի նախագահի, հանձնաժողովի անդամների և հանձնաժողովի քարտուղարի կազմով: Ընդ որում՝ հանձնաժողովի քարտուղարը չունի քվեարկելու իրավունք:

9. Հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները"

բ) կազմակերպում է քվեարկություն.

գ) որոշում է ստուգվող անձանց մուտքի հերթականությունը.

դ) որոշում է ստուգվող անձին հարցեր տալու հերթականությունը.

ե) սահմանված ժամանակը լրանալու դեպքում դադարեցնում է ստուգման գործընթացը.

զ) հայտարարում է ընդմիջումներ.

է) քննարկում է հանձնաժողովի անդամների առաջարկություններն ու առարկությունները և դրանց վերաբերյալ կայացնում որոշում.

ը) իրականացնում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման գործընթացի պատշաճ կազմակերպման այլ գործառույթներ:

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) հանձնաժողովի անդամներին հրավիրում է հանձնաժողովի նիստերին.

բ) կազմում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման գործընթացի արձանագրությունները և դրանք հանձնում հանձնաժողովի նախագահին.

գ) հանձնաժողովի նախագահին և անդամներին ապահովում է անհրաժեշտ գրենական կամ տեխնիկական և այլ անհրաժեշտ միջոցներով.

դ) ստուգվող անձանց հրավիրում է ստուգման.

ե) ապահովում է, որ ստուգման գործընթացը չխաթարվի.

զ) կատարում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման գործընթացի պատշաճ իրականացմանն ուղղված հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները:

11. Հանձնաժողովի անդամը՝

ա) պարտավոր է մասնակցել հանձնաժողովի նիստերին.

բ) պարտավոր է մասնակցել քվեարկություններին.

գ) հանձնաժողովի նիստին մասնակցել չկարողանալու կամ ուշանալու դեպքում այդ մասին պարտավոր է նախօրոք հայտնել հանձնաժողովի նախագահին

դ) հանձնաժողովի նիստերի ժամանակ հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ իրավունք ունի հարցեր տալ կամ պարզաբանումներ պահանջել ստուգվող անձից.

ե) իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել հանձնաժողովի նախագահին.

զ) իրավունք ունի պահանջել, որ վերացվեն հանձնաժողովի նիստը խաթարող գործողությունները.

է) հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ իրավունք ունի իրականացնել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման գործընթացի պատշաճ իրականացումը ապահովող այլ գործառույթներ.

ը) իրավունք ունի քվերկության արդյունքների վերաբերյալ ներկայացնել գրավոր հատուկ կարծիք:

12. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգումն անց է կացվելու փակ՝ ունկնդրման կամ դիտման ընթացակարգով, որին կարող են մասնակցել միայն հանձնաժողովի անդամներն ու ստուգվող անձը: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամանակ արգելվում է այլ անձանց մուտք գործել ստուգման անցկացման վայր:

13. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ընթացակարգը տեսաձայնագրվում է միայն ստուգվող անձի մասով:

14. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամանակ ստուգվող անձն իրավունք ունի դուրս գալ ստուգման սենյակից միայն հանձնաժողովի թույլտվությամբ և միայն անհրաժեշտության դեպքում: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամանակահատվածում արգելվում է ծխել, սնվել, աղմկել, խոսել հեռախոսով, վիճաբանել հանձնաժողովի անդամների հետ: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամանակ ստուգվող անձը պարտավոր է ներկայանալ պատշաճ տեսքով և պահպանել համակեցության կանոնները:

15. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամանակ ստուգվող անձն իր հետ բերում է Թատրոնում ելույթների ժամանակ օգտագործվող համապատասխան երաժշտական գործիքը կամ դրա անհնարինության դեպքում նրան տրվում է համապատասխան երաժշտական գործիք: Ստուգվող անձին տրվում է խմելու ջուր և բաժակ, ինչպես նաև նրա առաջարկով ապահովվում է, որ անձն ունենա անհրաժեշտ համապատասխան միջոցներ իր մասնագիտական որակավորումը ներկայացնելու համար:

16. Յուրաքանչյուր անձի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման առավելագույն ժամկետը 15 րոպե է: Ստուգվողի խնդրանքով հանձնաժողովն իրավունք ունի այդ ժամկետը երկարաձգել 5 րոպեով:

17. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման արդյունքներով հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որը պարտավոր են ստորագրել հանձնաժողովի բոլոր անդամները և հանձնաժողովի քարտուղարը: Եթե հանձնաժողովի անդամն ունի հատուկ կարծիք կամ համաձայն չէ արձանագրության հետ, ապա կարող է իր առարկությունները գրավոր ներկայացնել հանձնաժողովին՝ ստուգման ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում:

18. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգմանը ստուգվողի անհարգելի բացակայության կամ իրեն ստուգման հրավիրելուց տասնհինգ րոպեից ավելի ուշանալու դեպքում համարվում է, որ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ենթակա նվագախմբի երաժիշտը դիտավորյալ չի ներկայացել ստուգման: Այս դեպքում համարվում է, որ տվյալ անձը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

19. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգմանը ստուգվողի հարգելի բացակայության դեպքում Թատրոնի տնօրենի հրամանով սահմանվում է տվյալ անձի համար ստուգման այլ օր, ժամ և վայր:

20. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ համապատասխան երաժշտի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ժամանակ իրավունք ունի գնահատման թերթիկի վրա կատարել գրառումներ և նշումներ, ինչպես նաև հարցեր տալ ստուգվող անձին կամ առաջարկել կրկնել կատարումը կամ տալ պարզաբանումներ կատարման վերաբերյալ: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ավարտից և ստուգվող անձի ստուգման սենյակից դուրս գալուց անմիջապես հետո հանձնաժողովի նախագահը կամ նրան փոխարինող անձը առաջարկում է կատարել բաց քվեարկություն: Քվեարկության է դրվում «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» առաջարկը: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Քվեակությունն իրականացվում է հանձնաժողովի անդամի կողմից ձեռքի բարձրացմամբ: Առաջարկին կողմ քվեարկող հանձնաժողովի անդամը պարտավոր է բարձրացնել ձեռքը: Հանձնաժողովի նախագահը կամ նրան

փոխարինող անդամը բարձրաձայն կատարում է կողմ ձայների հաշվառում և առաջարկում հանձնաժողովի քարտուղարին արձանագրել քվեարկության արդյունքները՝ առանց նշելու կողմ քվեարկած հանձաժողովի անդամների անունները:

21. Գնահատման թերթիկի վրա կատարած գրառման և հանձնաժողովի անդամի քվեարկության միջև հակասության դեպքում հիմք է ընդունվում քվեարկության ժամանակ հանձնաժողովի անդամի կատարած քվեարկությունը: Քվեարկության թերթիկը չի հանձնվում հանձնաժողովին կամ Թատրոնին:

22. Համարվում է, որ անձը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին, եթե այդ առաջարկին կողմ են քվեարկել ստուգմանը ներկա հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Եթե առաջարկին կողմ են քվեարկել ստուգմանը ներկա հանձնաժողովի անդամների կեսից պակաս անդամներ, ապա համարվում է, որ ստուգվող անձը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին: Ձայների հավասարության դեպքում համարվում է, որ անձը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին:

23. Նկատի ունենալով, որ քվեարկության ժամանակ հանձնաժողովի անդամի դիրքորոշումը համարվում է տվյալ անձի անձնական տվյալ, ապա արգելվում է այլ անձանց տրամադրել կամ տարածել կամ հրապարակել կողմ քվեարկած կամ կողմ չքվերկած հանձնաժողովի անդամների վերաբերյալ տեղեկատվությունը:

24. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման արդյունքների համաձայն հանձնաժողովը կայացնում է որոշում, որը ստորագրում են հանձնաժողովի անդամներն ու քարտուղարը: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի որոշումը հանձնաժողովի նախագահը, այն կայացնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, հանձնում է Թատրոնի տնօրենին:

25. Թատրոնի տնօրենը զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման վերաբերյալ հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա, ինչպես նաև հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը տրամադրում է ստուգվող անձին, միայն վերջինիս մասով: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ընթացակարգում հանձնաժողովի անդամների անկախության ապահովման նպատակով՝ հրապարակման ենթակա չէ թե հանձնաժողովի որ անդամն ինչպես է քվեարկել:

26. Նկատի ունենալով, որ մասնագիտական որակավորման ստուգման արդյունքները **համարվում են տվյալ անձի անձնական տվյալ**, ապա հանձնաժողովի անդամներին կամ քարտուղարին կամ այլ անձանց արգելվում է առանց տվյալ անձի գրավոր համաձայնության տրամադրել կամ հրապարակել տեղեկատվություն զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ընթացակարգերի ժամանակ ստուգվող անձի ստուգման ընթացակարգի կամ որակավորման գնահատականի վերաբերյալ: Հրապարակման ենթակ չեն նաև զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման տեսաձայնագրությունները:

27. **Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման արդյունքները ստուգվող անձի կողմից կարող են բողոքարկվել Թատրոնի տնօրենին հանձնաժողովի որոշումը նրան հանձնելուց հետո 5-օրյա ժամկետում**: Երաժշտի բողոքում պետք է նշվեն բողոքարկման հիմքերը, հիմնավորումները, ինչպես նաև նրա պահանջը: Բողոք ներկայացնել ցանկացող անձի դիմումի համաձայն՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում նրան տրամադրվում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգաման տեսաձայնագրությունը՝ միայն իր մասով:

28. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման արդյունքի վերաբերյալ երաժշտի բողոքը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Թատրոնի տնօրենի հրամանով ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս քան հինգ անդամից: Բողոքարկման հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման հանձնաժողովի անդամները:

29. Բողոքարկման հանձնաժողովը բողոքի քննարկումն իրականացում է հանձնաժողովի ստեղծումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման հանձնաժողովի ստեղծումից հետո Թատրոնը բողոքարկման հանձնաժողովի նախագահին է տրամադրում զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման տեսագրությունը՝ միայն տվյալ անձի մասով, ինչպես նաև միայն տվյալ անձի մասով զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման հանձնաժողովի արձանագրությունից քաղվածքը: Բողոքարկման հանձանժողովն իր նիստին հրավիրում է նաև բողոք բերողին: Բողոքարկող հանձնաժողովն իր որոշումն ընդունում է բողոք բերողի մասով առկա տեսաձայնագրության, բողոք բերողի մասով հանձնաժողովի որոշման, արձանագրության քաղվածքի, ինչպես նաև բողոք բերողի կողմից նշված բողոքի հիմքերի և հիմնավորումների հիման վրա: Բողոքարկման հանձնաժողովն իրավունք չունի իրականացնելու տվյալ անձի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության նոր ստուգում:

30. Բողոքարկման հանձնաժողովն իր որոշումն ընդունում է բողոքի քննարկումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքի քննարկման արդյունքներով բողոքարկման հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) տվյալ անձի վերաբերյալ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման հանձնաժողովի որոշումը թողնել անփոփոխ՝

բ) փոխել հանձնաժողովի որոշումը և կայացնել բողոքարկողի կողմից պահանջվող որոշում՝

գ) տվյալ անձի մասով անցկացնել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման նոր ընթացակարգ:

31.Բողոքարկող հանձնաժողովի որոշումը, այն կայացնելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում, հանձնվում է Թատրոնի տնօրենին:

32. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 18.1-ին հոդվածի 7-րդ մասի համաձայն զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման արդյունքի վերաբերյալ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին հանձնաժողովի որոշման դեպքում Թատրոնի երաժշտի նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգավորումները:

33. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Թատրոնի տնօրենի առաջին տեղակալ Կարինե Կիրակոսյանի վրա:

34. Թատրոնի նվագախմբի վարիչին՝ սույն հրամանի մասին պատշաճ ծանուցել Թատրոնի նվագախմբի այն երաժիշտներին, ովքեր սույն հրամանի համաձայն պետք է անցնեն զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգում, ինչպես նաև նրանց նախապատրաստել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգմանը:

35. Թատրոնի հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

36. Ուժը կորցրած ճանաչել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի ապրիլի 30-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծագործական անձնակազմի աշխատողների մասնագիտական որակավորման քննությունների անցկացման ընթացակարգը և գնահատման առանձնահատկությունները հաստատելու մասին» թիվ 134-Ա և «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի ապրիլի 30-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծագործական անձնակազմի

աշխատողների մասնագիտական որակավորման քննությունների անցկացման կանոնակարգը և ստեղծագործական անձնակազմի որակավորման աստիճանների ցանկը հաստատելու մասին» թիվ 136-Ա հրամանները:

37. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրեն՝ Կ. Դուրգարյան

ք. Երևան
«11» սեպտեմբերի 2025 թ.

ARMENIAN
NATIONAL OPERA
AND BALLET THEATRE

Հավելված N 1

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի

2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1496-Լ հրամանի

Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին
համապատասխանության ստուգման ձևաչափը

1. Յոհ.Ս.Բախ – 1 (մեկ) մաս պարտիտներից կամ սոնատներից
2. Կոնցերտ - /I կամ II, III մասեր/ կամ մեծածավալ կտավի ստեղծագործություններ,
3. Պարտիաների ընթերցում (թատրոնի խաղացանկից):

NATIONAL OPERA
AND BALLET THEATRE

Հավելված N 2

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի

2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1496-Լ հրամանի

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման անցկացման գնահատման թերթիկի ձևը

__.__.2025 թ., ժ. __:__

Զբաղեցրած պաշտոնը

N	Ազգանուն, անուն	Յո. Ս. Բախ – 1-ին մաս	Կոնցերտ՝ (1-ին կամ 2-րդ, 3-րդ մասեր) կամ մեծածավալ կտավի ստեղծագործություններ, անսամբլներ, սոնատներ	Պարտիաների ընթերցում (Թատրոնի խաղացանկից)	Նշումների համար
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					

Հավելված N 3

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի

2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1496-Լ հրամանի

Թատրոնի նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ենթակա երաժիշտների ցանկը

ՀՀ	Նվագախմբի լարային գործիքների երաժիշտների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման ենթակա երաժիշտների ազգանունը, անունը, հայրանունը	Զբաղեցրած պաշտոնը	Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման անցկացման օրը և ժամը
ԱԼՏԱՀԱՐՆԵՐ ՈՒ ԹԱՎՋՈՒԹԱԿԱՀԱՐՆԵՐ			Օպերային թատրոն 14.10.2025 թ., ժ. 11:00
1.	Ալաջանյան Բաբկեն Գեորգիի	Ալտահարների խմբի 4-րդ պուլտի փոխպատասխանատու	
2.	Ասատրյան Նարեկ Ռուբիկի	Ալտահարների խմբի 5-րդ պուլտի փոխպատասխանատու	
3.	Բեգլարյան Օֆելյա Յուրիի	Ալտահարների խմբի 4-րդ պուլտի պատասխանատու	
4.	Բարսեղյան Մարինա Ցոլակի	Թավջութակահարների խմբի 3-րդ պուլտի պատասխանատու	
5.	Գիլավյան Սերինե Աշոտի	Ալտահարների խմբի 3-րդ պուլտի փոխպատասխանատու	
6.	Գևորգյան Ներսես Գագիկի	Թավջութակահարների խմբի 5-րդ պուլտի պատասխանատու	
7.	Գասպարյան Նարեկ Արմենի	Թավջութակահարների խմբի 5-րդ պուլտի փոխպատասխանատու	
8.	Եղիշյան Վահագն Կարոյի	Ալտահարների խմբի կոնցերտմայստեր	
9.	Ենգիբարյան Գառնիկ Գագիկի	Թավջութակահարների խմբի կոնցերտմայստեր	
10.	Կարապետյան Հայկազ Սուրենի	Ալտահարների խմբի փոխկոնցերտմայստեր	
11.	Հարությունյան Ջուլիետա Մանվելի	Ալտահարների խմբի 5-րդ պուլտի պատասխանատու	
12.	Հովհաննիսյան Լյուդմիլա Ալբերտի	Ալտահարների խմբի 5-րդ պուլտի պատասխանատու	
13.	Մալիշենկո Ալբինա Սերգեյի	Ալտահարների խմբի 2-րդ պուլտի պատասխանատու	
14.	Մուրադյան Սուսաննա Համլետի	Թավջութակահարների խմբի 2-րդ պուլտի պատասխանատու	
15.	Սեդրակյան Սոսե Վահեի	Ալտահարների խմբի 3-րդ պուլտի պատասխանատու	
16.	Սևոյան Լիլի Հովնանի	Ալտահարների խմբի 5-րդ պուլտի փոխպատասխանատու	
17.	Սեմինենկո Աննա Ալեքսանդրի	Թավջութակահարների խմբում	
18.	Վարդանյան Նաիրա Անդրանիկի	Թավջութակահարների խմբի 2-րդ պուլտի փոխպատասխանատու	
19.	Տեր-Սիմոնյան Հասմիկ Սամվելի	Թավջութակահարների խմբի 4-րդ պուլտի պատասխանատու	
20.	Օգանեսով Օնիկ Կառլենի	Թավջութակահարների խմբի փոխկոնցերտմայստեր	